

Իվեթ Ն. Թաջարյան  
Արվեստագիտության թեկնածու

## ԻՐԱՆԱՀԱՅ ԳԵՂԱՆԿԱՐԻՉ ԱՆՈՒԹ ՍԵՎՐՈՒԳՅԱՆԻ ԱՐՎԵՍՏԸ\*



Անթուան Սեվրուգինի լուսանկարներից. «Աղբատ քոչվորներ» շարքից



Անթուան Սեվրուգինի լուսանկարներից. «Լոռեցի 3 կանայք»

Անդրե Սևրուգյանի ստեղծագործությունները նոր արտահայտչաձևերի և գեղարվեստական ոճի որոնումներ էին 20-րդ դարի իրանական գեղանկարչության մեջ: Նա իր աշխատանքներում փորձել է ստեղծել մի ուրույն ոճ, որտեղ առանձին շեշտադրումները կատարված են հեռանկարի, ծավալի, շարժունակության և մարդկային բնավորության գծերի միջոցով:

Արվեստագիտական գրականության մեջ մինչև օրս թյուրիմացաբար իրանահայ արվեստագետներ հայր և որդի Սևրուգյաններին (Սևրուգիններին) համարել են ծագումով ռուս, վրացի, պարսիկ, իսկ վերջերս նաև՝ ֆրանսիացի, երբ իրականում նրանք ծնունդով հայեր են: Վերջին տարիներին աշխարհի հեղինակավոր թանգարաններում՝ ամերիկյան «Ֆրիք» արվեստի ցուցասրահում, Նիդերլանդների Լեյդեն քաղաքի ազգագրության թանգարանում (հայտնի է որպես Բոսխարդի հավաքածու) կազմակերպվող միջազգային ցուցահանդեսները, կարդացվող դասախոսությունները, մեծ քանակով տպագրվող կատարվածներն ու կազմակերպվող ցուցադրությունները վկայում են նրանց ժառանգության նկատմամբ Արևմուտքում առկա մեծ հետաքրքրության մասին: Նշված թանգարաններում պահվող Սևրուգյանների ստեղծագործությունները դարձել են նաև բարձրագույն ուսումնական հաստատություններում կազմակերպվող դասախոսությունների և քննարկումների առարկա:

հոկտեմբեր-դեկտեմբեր, 2011  
Գ (60) փարի, թիվ 4 (36)

վեմ համահայկական հանդես

\*Չողվածն ընդունվել է տպագրության 10.11.2011:

Իրանահայ նկարիչների ճանաչված գերդաստանի վառ ներկայացուցիչ Անդրե Սևրուգյանը (Դերվիշը) ծնվել է 1894 թ. մայիսի 1-ին՝ Թեհրանում: Նրա հայրը Ղաջարական հարստության թագավոր Նասեր էդ Դին շահի պալատական լուսանկարիչ Անթուան խան Սևրուգինն էր, իսկ պապը՝ Վասիլի Սևրուգինը, մասնագիտությամբ արևելագետ էր և սովորել էր Լազարյան ճեմարանում: Տիրապետելով արաբերենին, պարսկերենին, հայերենին, վրացերենին և ռուսերենին, վերջինս, որպես դիվանագետ, մոտավորապես 1845-1851 թթ. աշխատել է Թեհրանի ռուսական դեսպանատանը: Ինչպես բազմաթիվ հայեր, որոնք Ռուսաստանում զբաղվում էին քաղաքական գործունեությամբ, Վասիլին նույնպես ստիպված էր եղել փոխել իր ազգանունը<sup>1</sup>: Այդ իսկ պատճառով Անթուան խան Սևրուգինին վերաբերող յուրաքանչյուր հոդվածում նրան հիշատակում են որպես ռուսի, վրացու կամ պարսիկի՝ ազգանունը նշելով **Sevriogin, Serunian, Segruvian, Sevruguine, Sevrugin** և **de Sevruguine** ձևերով: Բայց հետագայում Անթուանի տղան՝ Անդրեն, Սևրուգյան ազգանվամբ էր ներկայանում, իսկ ներկայումս Անդրեի որդին, որն ապրում է Հայդելբերգում, գրվում է Էմանուել Սևրուգյան:

Փոքրիկ Անդրեն մեծացել է գեղարվեստով հարուստ մթնոլորտում՝ հեքիաթային լուսանկարների, ընտանիքի հնագիտական հավաքածուների ազդեցության ներքո, ինչը նրա հոգին հետաքրքրությամբ ու սիրով է լցրել անցյալ կյանքի ու կենցաղի հանդեպ: Ամեն անգամ, երբ նրա հայրը Անթուանը, իր կազմակերպած բանաստեղծական խնջույքներում կարդացել է Ֆիրդուսու «Շահնամեն»<sup>2</sup>, Անդրեն մեծ ոգևորությամբ է ունկնդրել: Պատանեկան տարիներին հաճախ է պատահել, որ նա հին սաղավարտը դրել է գլխին, հեծել աթոռի վրա և երևակայել է իրեն «Շահնամեի» հերոսներից մեկը՝ Ռուստամ, Աֆրասյաբ, Քեյքաուս, Բիժան: Բայց Ռուստամն էր Ֆիրդուսու սիրելին, նրա ոգևորության աղբյուրը, ստեղծագործության էությունը: Այս մթնոլորտում է ձևավորվել ապագա գեղանկարչի ճաշակը:

Անդրեն սկզբում ստեղծագործել է ինքնուս. ջրաներկով նկարել է բնապատկերներ, սիմվոլիստական աշխատանքներ, որոնք ստեղծվել են Իրանի տարածքով ճամփորդելիս: Դա այն ժամանակ էր, երբ նա դեռ 15 տարեկան էր (1909-1910 թթ.): 1912-1913 թթ. Անդրեն սովորում է Փարիզի Գեղեցիկ արվեստների ակադեմիայում: Մի շարք արվեստի գործիչների և գրականագետների հետ մասնակցում է փիլիսոփայական հավաքների, որտեղ էլ ստանում է «Դերվիշ» մականունը, քանի որ ասկետիկ ապրելակերպ ուներ և սուֆիստական-իսլամական միստիցիզմով էր հետաքրքրված:

Անդրեն ստեղծագործել է 20-րդ դարում և պատկանում է նկարիչների այն սերնդին, որոնք տվյալ ժամանակաշրջանում փորձում էին նորարարություն բերել պարսկական կերպարվեստ: Նրա նկարների թեմաները հիմնականում վերցված

1 Sevruguin and the Persian Image: Photographs of Iran, 1870-1930. Edited by Frederick N. Bohrer, Published by the Arthur M. Sackler Gallery, Smithsonian Institution, Washington, D. C., and the University of Washington Press, Seattle and London 1999, p. 23.

2 «Շահնամե» թարգմանաբար նշանակում է «Գիրք շահերի մասին» և հանդիսանում է նրա հեղինակ Ֆիրդուսու տրամադրության տակ եղած վաղնջական ժամանակներից մինչև 7-րդ դ. ընդգրկող պատմական աղբյուրների բանաստեղծական մշակումը: Ֆիրդուսին 35 տարի աշխատել է Շահնամեի վրա և ի վերջո՝ 71 տարեկան հասակում, ավարտել է այն: «Շահնամեն» պարունակում է 30. 000 բեյթ (երկտող) և ըստ կառուցվածքի բաժանված է 50 այսպես կոչված «փաղեշահների» (թագավորությունների), որոնք ծավալով հավասար չեն (մի քանի տասնյակից մինչև մի քանի հազար բեյթ): Պայմանականորեն ընդունված է «Շահնամեն» բաժանել 3 մասի՝ դիցաբանական, դյուցազնական և պատմական:

էին միջազգային համբավ ունեցող բանաստեղծներ Ֆիրդոուսու, Խայամի, Հաֆեզի, Բաբա Թահերի ստեղծագործություններից, որոնցում արտահայտվել են համաարդկային և մարդասիրական գաղափարներ:

Անդրեի ստեղծագործությունները հիմնականում երկու դասի են բաժանվում՝ ըստ նրա բնակության վայրի և ըստ ոճի: Իրանից Գերմանիա տեղափոխվելուց հետո Անդրեի ստեղծագործության մեջ տեղի են ունենում զգալի տեղաշարժեր. փոխվում է նրա նկարչական ոճը, որն արտահայտում էր անցումը պարսկական մանրանկարչությունից հայկական աշուղական, պատմական, կրոնական ստեղծագործությանը:

Տաղանդավոր նկարիչը ստեղծագործել է հին ժամանակների պարսկական մանրանկարների, մասնավորապես՝ Մեֆեյան հանրահայտ նկարիչներ Քամալ Օլ Դին Բեեզադի և Ռեզա Աբբասիի ոճով, որում հիմնական ուշադրությունը դարձրել է զարդամտփվային մանրամասներին: Մակայն նա կարողացել է ներդաշնակել հին ու նոր երևույթները: Հետևելով իրանական միջնադարյան կանոն-

ՄՇԱԿՈՒՅԹ

Գ. (Թ) գաթի, քիվ 4 (36) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2011



Նորաճ մանրանկար. «Շահնամե» շարքից, գուաշ



Նորաճ մանրանկար. «Շահնամե» շարքից, գուաշ

ՎԷՄ համահայկական հանդես



Նորաճ մանրանկար. «Շահնամե» շարքից, գուաշ

ներին, միաժամանակ Անդրե Սևրուգյանը նորամուծություն է կատարել պարսկական կերպարվեստում. նա մանրանկարչության մեջ մտցրել է հեռանկարային լուծումներ, ծավալայնություն, լուսաստվերային համակարգ և այլն:

Արվեստի բնագավառում Անդրեի սկզբնական նորամուծություններն արվել են նախ՝ Ֆիրդոուսի բանաստեղծությունների ներշնչման ներքո: Առաջին համաշխարհային պատերազմից հետո, երբ Անդրեն, իբրև կամավոր զինվոր, ֆրանսիական բանակում էր ծառայում, Պարսկաստան վերադարձավ և յուրովի իրագործեց Ռուստամ դառնալու մանկության երազանքը: Իսկական դերվիշի պես ոգևորված՝ նա ինը տարի շարունակ տրվեց նկարչությանը: Կտրվել էր դրսի աշխարհից, փակվել բնակարանում, զոհել ամեն հաճույք, ամեն նյութական շահ, իր հոգին խառնել էր Ֆիրդոուսի բանաստեղծություններին: Այսպես՝ բոլորանվեր ոգևորությամբ և շնորհիվ իր տաղանդի ու բարձր երևակայության, նա ստեղծեց 416 գեղարվեստական պաստառներ պարսիկ մեծ բանաստեղծ Ֆիրդոուսու «Շահնամե» պոեմի հերոսների պատկերներով: Նկարները ցուցադրվեցին 1934 թվականի ապրիլի 28-ին՝ տասնհինգ օր, Թեհրանի Մանկավարժական ինստիտուտի<sup>3</sup> դահլիճում:

1933-1934 թվականներին, երբ ամբողջ աշխարհը՝ Արևելքից Արևմուտք, պատրաստվում էր տոնել հռչակավոր Ֆիրդոուսու հազարամյակը, երբ ամեն մի իրանցու սիրտ տրոփում էր պարծանքի անափ զգացումով ու հպարտությամբ, Անդրե Սևրուգյանի «Շահնամեի» նկարների ցուցադրումը հաճելիորեն զուգադիպեց զգացմունքային այդ վերելքին: Իրանահայ մեկ այլ նշանավոր նկարիչ, բանաստեղծ Մարգար Դարաբեգյանը (Դ-Լը) այդ առթիվ Իրանի «Վերածնունդ» շաբաթաթերթում գրում էր. «Նկարների այս շարանը ամենամեծ նվերը հանդիսացավ Անդրե Սևրուգյանի կողմից իր հայրենակիցներին Ֆիրդոուսու հազարամյակի առիթով»<sup>4</sup>:

Նկարիչը իր պաստառներում պատկերել է «Շահնամեի» գրեթե բոլոր էջերը, բոլոր աչքի ընկնող դեպքերն ու պատմությունները, հերոսների քաջագործությունները: Նկարներից հորդում են շունչ ու կյանք ստացած առասպելական կենդանի-

3 Դայտնի է «Դանեշարայե Ալի» անունով:

4 «Վերածնունդ» շաբաթաթերթ, Թեհրան, 1934 թ., մայիսի 8:

ներն ու ձիերը և կազմում մի համայնապատկեր, որպեսզի դիտողը հեշտ ու հստակ տեսնի, հասկանա և զգա մեծ բանաստեղծի գրչից բխած գեղահրաշ տողերի կենդանի հանդեսը:

Նկարչի խորաթափանց պատկերները առույգ են, աշխույժ, արտահայտիչ և համապատասխանում են կերտված հերոսների ապրումներին: Դրանք ներկայացնում են իրենց ժամանակի ողջ անցուդարձը: Այս բոլորին միանում է չքնաղ գույների ուժեղ և ազդեցիկ թովչանքը, շնչող թարմությունը, կենդանիների շարժունակությունը, հատկանիշներ, որոնք ամբողջությամբ արտահայտում են մեծ բանաստեղծի հաղթ ու զորեղ մտքերը: Ուստի Մարգար Դարաբեգյանն այս կապակցությամբ իրավացիորեն արձանագրել է. «Եթե Ռուստամը անմահ հերոս է պատերազմի և քաջագործության մեջ, եթե Ֆիրդոուսին եզակի հերոս է բանաստեղծության մեջ, անտարակույս Անդրե Սևրուզյանը ևս մի հերոս է նկարչության մեջ»<sup>5</sup>:

Անդրեի նկարները դիտելիս, անշուշտ, ուշադրության են արժանի զարդարանքի ձևով ներկայացված գույները, որոնք բխում են բանաստեղծություններից: «Շահնամեի» հեղինակը իր բանաստեղծություններում լայնորեն ներկայացրել է արևելյան բնության շռայլ, հարուստ գույները՝ հնարավորություն տալով Անդրե Սևրուզյանին օգտագործել իր փայլուն գունապնակի ոսկեգույն, արծաթագույն, փիրուզագույն երանգները, որոնք լիովին համապատասխանում են Ֆիրդոուսու բանաստեղծության ոգուն:

Անդրե Սևրուզյանի այս նկարները պատկերված են նկարչի հմուտ վարպետությամբ, հերոսների համաչափ արտաքինով, որոնք աչքի են ընկնում իրենց հստակ ու պարզ ուրվագծերով: Ամեն նկար առանձին դիտելիս զգացվում է, որ նկարիչը բանական մոտեցում է ունեցել պատկերին: Յուրաքանչյուր պատկերի մեջ նա ստեղծել է համապատասխան համաչափ, հավասարակշռված կառույց: Այս հավասարակշռությունը պահպանված է թե՛ կոմպոզիցիան կազմող բաղադրիչներով և թե՛ օգտագործված գույներով:

«Շահնամեի» նկարներում աչքի են ընկնում նաև կոր գծերը, որոնք սփռված են ամենուրեք, շեշտադրված են կերպարների, մարմնի մասերի առանձին հատվածներում, կենդանիների, բույսերի, ծառերի և այլ պատկերներում: Կոր գծերը հետևում են իրար, բխում են մեկը մյուսից, և այդ ամենը առանձնահատուկ զգացողությամբ է համակում դիտողին՝ ստիպելով հետևել նայվածքներին ու շարժումներին:

Ուշադրության են արժանի Փիրդոուսու՝ ատելությամբ ու զայրույթով, մարտական ոգով կամ փիլիսոփայական իմաստով ու սիրով ներդաշնակված կերպարները, որոնց ապրումները, զգացումները կարծես դուրս են հորդում պաստառներից: Մյուս առանձնահատկությունն այն է, որ Անդրե Սևրուզյանի յուրաքանչյուր պատկերի արտահայտիչ մասում՝ համապատասխան այդ պաստառի բանաստեղծական թեմային, տեղադրվել է տվյալ բանաստեղծությունն ամբողջությամբ կամ դրա մի հատվածը, որով արտահայտվել է ստեղծագործության հիմնական միտքը՝ Իրանի վաղնջական, հերոսական և առասպելական երևույթները ցուցադրելով կենդանի հնչեղությամբ:

«Շահնամեի» պատկերներով նկարները Անդրե Սևրուզյանը ստեղծել է գուաշով՝ սովորաբար փայլ, և նրանցից ամեն մեկն ունի իր առանձնահատուկ չափ-

5 Նույն տեղում:

սերը: Մասնավոր հավաքածուներում պահպանված նրա աշխատանքները դիտելիս նկատվում է, որ դրանք բոլորը թե՛ առջևից և թե՛ հետևից շրջանակված են մեկ սանտիմետրանոց առանձին թղթով, որը ստանձված է նկարի շուրջ: Նկարիչը ոսկեգույնով է նկարել այլ թղթով պատրաստված շրջանակը, որով նկարը ավելի արտահայտիչ է դարձել: Հավանաբար, շրջանակներն արվել են նաև բուն նկարը ավելի լավ պահպանելու նպատակով:

Չմոռանանք, որ այս նորամուծությունները իրանցի ավանդապահ ժողովրդի համար խորթ էին և չէին բխում նրա հավատքից: Իսլամը բացառում էր Աստծո, հետո նաև՝ մարդու պատկերումը արվեստում, քանզի արարելը, կերտելը համարում էր Աստծո մենաշնորհը: Այս նորամուծությունները հանգեցրին մոնումենտալ արվեստի բնագավառում մշակութային դարավոր ավանդույթների խախտմանը:

Ժամանակին արաբական, ինչպես նաև Սիջին Արևելքի այլ երկրների պատկերագրության վրա մեծ ազդեցություն ունեցավ պատկերամարտական արվեստի առաջացումը: Դուրանում մարդու կողմից ստեղծված մարդկային կերպարանքները համարվում էին սատանայի տեսիլներ: Մշակութային շինություններում չէր թույլատրվում նկարել, քանդակել մարդկանց պատկերները:




Մանրանկար. «Խայան» շարքից, ջրաներկ

Դուրանը և աստվածաբանական այլ գրքեր զարդարում էին միայն զարդանախշերով<sup>6</sup>: Բայց ժամանակ առ ժամանակ՝ կապված տիրող իշխանության նկատմամբ հավատի չափից, եղել են բացառություններ, որոնք ժողովրդի կողմից նույնպես միանշանակ չեն ընկալվել: Օրինակ՝ Ղաջար թագավորները, մասնավորապես՝ Նասեր Էդ Դին շահը, հայտնի էին իրենց «բարեփոխումներով»: Վերջինս փորձում էր Իրանը բառիս բուն իմաստով «նորացնել», ինչը տեսանելի էր բոլոր ասպարեզներում: Պետք է նշել, որ Ղաջարական դինաստիայի գնահատականը միշտ չէ, որ միանշանակ է եղել, ուստի Անդրե Սևրուզյանը՝ նույնպես իր բացահայտ նորամուծու-

6 Նկարների արգելումը Դուրանում չի կարելի անմիջականորեն Մուհամեդի խոսքին վերագրել: Կա կարծիք, որ դրանց արգելումը ավելի նշանակալից է դարձել Աբդ օլ Մալեք խալիֆի դրամական ռեֆորմից հետո՝ 696-697 թթ.: Նա դրամի պատկերը փոխարինեց կրոնական տեքստերով: Միայն ավելի ուշ՝ հավանաբար 9-10-րդ դարերում, իսլամի պատկերամարտական միտումները օգտագործվել են արվեստի որոշակի կատեգորիաներ արգելելու համար: Տիրում էր այն մտայնությունը, որ մարդկային կերպարանքով ստեղծված քանդակը կամ նկարը վերջին դատաստանի ժամանակ կենդանանալու է և իր արարչից (այս դեպքում՝ նկարչից կամ քանդակագործից) պահանջելու է իր հոգին, ու քանի որ արվեստագետ-մահկանացուն տկար է այդ հարցում, ապա նա դժոխք է գնալու:



Սանրանկար. «Խայամ» շարքից, ջրաներկ



Անանուն յուղաներկ


յուններով միատեսակ չընկալվեց: Բայց փաստերից ելնելով՝ կարող ենք ասել, որ դարաշրջանը, որում ապրում էր նկարիչը, նպաստեց, որպեսզի յուրովի ընկալվի նրա արվեստը:

Անդրե Սևրուզյանի առաջին ցուցահանդեսից անմիջապես հետո՝ 1934 թվականին, թե՛ իրանական («Քեյհան», «Էթերլաթ») և թե՛ հայկական թերթերում («Վերածնունդ», «Ալիք») բազմաթիվ հոդվածներ տպագրվեցին դեռևս անհայտ, անծանոթ նկարչի մասին: Նույն թվականի մայիսի 8-ին «Վերածնունդ» շաբաթաթերթը գրում էր. «Անդրեն փառք ու պատիվ է լինելու վերազարթնող Իրանի, ինչպես և իր ժողովրդի համար, նետվելով մարդկային քաղաքակրթության այն հորիզոնները, ուր մեծապես գնահատվելու, արժեքավորվելու և քաջալերվելու է իր կատարած մեծ աշխատանքը»<sup>7</sup>: Մեկ այլ տեղ կարդում ենք. «Մենք՝ հայ ժողովուրդը, շնորհավորելով Դերվիշին, նրա այս հաղթանակը արձանագրում ենք գեղարվեստի ասպարեզում իբր մեծ պարծանքը պարսկահայության: Երիտասարդ է նա, և դեռևս նորանոր դափնիներ պիտի գան պսակազարդելու նրա ճակատը»<sup>8</sup>:


Նրա ստեղծագործության գնահատման վկայությունն էր Իրանի կառավարության կողմից Անդրե Սևրուզյանին երկրորդ աստիճանի բրոնզե շքանշանով պարգևատրելը, որով արվեստագետը ավելի շատ ուշադրության արժանացավ:

«Շահնամնի» պատումների ցուցադրությունը պատճառ դարձավ, որ Անդրե Սևրուզյանը և պարսիկ հայտնի արձակագիր Սադեղ Հեդայաթը մտերմանան:

7 «Վերածնունդ» շաբաթաթերթ, Թեհրան, 1934թ. մայիսի 8:  
8 Նույն տեղում:



Բաթիկա. «Խայամ» շարքից



Բաթիկա. «Հաֆեզ» շարքից

Նրանք միասին Խայամին նվիրված գիրք հրատարակեցին, որը գրել էր Հեդայաթը, իսկ նկարագարողել՝ Դերվիշը:

1935 թվականին «Շահնամնի» պատաստները այլազգիներին ներկայացնելու նպատակով Անդրե Սևրուզյանը մեկնում է Հնդկաստան և իր աշխատանքները հաջորդաբար ցուցադրում է Կալկաթայի, Բոմբեյի և Հայդարաբադի ցուցասրահներում<sup>9</sup>: Արվեստագետն այստեղ նույնպես մեծ համբավ է ձեռք բերում և ոգևորված իր հաջողությունից՝ վերադառնում է Թեհրան ու նվիրվում Օմար Խայամի քառյակների նկարչական ձևավորմանը, ինչպես նաև մեծահռչակ պարսիկ բանաստեղծ Հաֆեզ Շիրազի գազելների թեմայով 180 մանրանկարների ստեղծմանը:

Այդ նկարներում Օմար Խայամ բանաստեղծը ներկայացված է գինու ազդեցության տակ, սիրո կախարդանքով ու անդիմադրելի գորությամբ՝ առանց ավելորդ մանրամասների: Յուրաքանչյուր նկարի տակ համապատասխան քառյակ է գրված: Նկարը հաճելիորեն շրջանակված է արևելյան զարդային գծագրությամբ: Շրջանակների մի մասի ֆոնը, համապատասխան բուն նկարի գույներին, ներկվել է ավելի մեղմ երանգով: Իսկ գծանկարներում աչքի են ընկնում բուսական ու ծաղկային տարբեր զարդամոտիվներ, երևակայական թռչուններ ու կենդանիներ:

Անդրե Սևրուզյանը ստեղծագործել է նաև յուղանկարներ, որոնք աչքի են ընկնում լույսի ու ստվերի խիստ հակադրությամբ: Դրանք ստեղծվել են Իրանի տարբեր անկյուններում ճամփորդելիս: Օտարագի զբոսաշրջիկները, գնելով

<sup>9</sup> Պաշտոնական անվանումներ՝ Calcutta- Indian Museum , Bombay-Town Hall, Hyderabad-Museum of Nizam of Hyderabad:





Բարիկա. «Սայաթ-Նովա» շարքից

այդ գեղանի ու նրբաճաշակ նկարները, բազմիցս տպագրել են հանդեսների մեջ: Պետք է նշել, որ վերջիններս իրենց քանակով համեմատաբար զիջում են ջրաներկով և գուաշով արված գործերին:

1936 թվականին նկարիչը մեկնում է Եվրոպա և հաստատվում Վիեննայում: Նույն թվականին Անդրե Սևրուզյանն իր աշխատանքներն է ցուցադրել տարբեր ցուցասրահներում և ամեն տեղ արժանացել գեղարվեստագետների հիացմունքին<sup>10</sup>: Ինչպես նշել են ժամանակի թերթերը, վաղուց մամուլը այդքան դրվատանք չէր շռայլել որևէ արվեստագետի: Հանրության ուշադրությունը հրավիրելու համար անգամ ռադիոյով հատուկ բանախոսություններ էին ներկայացվում: Եվրոպական մամուլի տարբեր օրգաններ հիացմունքի արտահայտություններով են հասարակությանը ծանոթացրել Սևրուզյան արվեստագետին: Օրինակ՝ գերմանական «Մորգեն պոստ» թերթը գրում էր. «Դերվիչը սքանչելի նկարիչ է, իր ձեռքի դյուրաթեքությունը գերազույն աստիճանի է հասել, գույները արտասովոր փայլ ունեն, զծագրությունը՝ անսահման նրբություն»<sup>11</sup>: «Վիեն Նյուզ Նախրիխթեն» թերթը հետևյալ ձևով է արտահայտվել. «Նկարչական կարողությունը, որով Սևրուզյանը ի ծնե օժտված է, ինքնաշխատությամբ զորացել է և զարգանալով ձևավորել բանաստեղծորեն ճշմարիտ մեծ նկարիչ: Դերվիչը մեն-մենակ շատ ավելի մեծ կարողություն ունի, քան ինչ-ինչ կաճառներ»<sup>12</sup>:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ Անդրե Սևրուզյանը կնոջ՝ Մանյայի և որդու՝ Էմանուելի հետ բնակվում էր Վիեննայում, ռմբակոծության հետևանքով նրա ստեղծագործության մեծ մասը կրակի ճարակ դար-

10 St'u Berlin-Galerie Gurlitt 1936, Bruxelles- Galerie Royale 1936, London-Greatorix Gallery, 1936.

11 «Berliner Morgenpost», Բեռլին, մարտի 11, 1936:

12 «Wiener Neueste Nachrichten», Վիեննա, հունվար, 15, 1936:

ծավ: Արվեստագետը, ընտանիքն առած, ճամպրուկում ընդամենը երկու աշխատանք «Շահմամեից», տեղափոխվեց Գերմանիա և հաստատվեց Շտուտգարտում: Այստեղ նա հիմնականում սկսեց ստեղծագործել հայկական թեմաներով:

1948 թվականին Անդրե Սևրուզյանը Օմար Խայամի թեմայով կատարած մեկ աշխատանքով մասնակցեց Շտուտգարտի միջազգային ցուցահանդեսին և արժանացավ բրոնզե շքանշանի: Այս անգամ ևս նրան փառաբանեցին Թեհրանի հայտանի թերթերը՝ «Քեյհանը», «Էթթելասթը», «Ժուռնալ Դե Թեհրանը» և այլն:

Անդրե Սևրուզյանի ստեղծագործության հաջորդ ցուցադրումը տեղի ունեցավ 1958 թ. Թեհրանի Գեղագիտական ցուցասրահում և 1961 թվականին՝ Իրանի Մշակույթի նախարարության նախաձեռնությամբ Թեհրանի Գեղարվեստի ակադեմիայում կազմակերպված ցուցահանդեսում, որը տևեց 1961 թ. դեկտեմբերի 21-ից մինչև 1962 թ. հունվարի 5-ը: Նույն թվականին Իրանի Աբադան քաղաքում նույնպես ցուցադրվում են արվեստագետի աշխատանքները:

Անդրե Սևրուզյանի ստեղծագործություններում իրենց ուրույն տեղն ունեն մաս հայկական թեմաներով նկարները, որոնք ներշնչվել են Հայոց պատմության հերոսական դրվագներից ու ժողովրդական կենցաղից: Այս առիթով կարելի է հիշատակել հետևյալ ստեղծագործությունները՝ «Արտաշես և Սաթենիկ», «Զորավար Անդրանիկի մահը», «Գրիգոր Լուսավորիչ», «Շամիրամ կողբա Արայի մահը», «Մուսա լեռան 40 օրերը», «Սարդարապատը», «Գորգագործ հայուհին» և այլն: Գրական աղբյուրներից ներշնչված աշխատանքներից են՝ «Անուշի և Սարոյի հանդիպումը», «Նամուսը» և այլն:

Անդրե Սևրուզյանը հանրահայտ է մաս իր բաթիկայի<sup>13</sup> արվեստով, որը մինչ այժմ հիացնում է դիտողին: Նկարիչը ստեղծել է ամմահ Սայաթ-Նովայի խաղերին նվիրված փայլուն ստեղծագործություններ, որոնք դրսևորում են արևելյան պերճանք: Նրա նկարները դիտելիս աչքի են ընկնում արվեստագետի մտորումները, երևակայությունը, հոգեբանական վիճակը, Սայաթ-Նովային հատուկ՝ պաշտամունքի հասած սիրո արտահայտությունները: Շղարշներ, գոտիներ, գույնզգույն ժապավեններ, մետաքսյա մազմուկ թելեր, որոնք ձուլված են օղին, երկնքին, աստղերին՝ կազմելով աննկարագրելի ներդաշնակություն:

Սայաթ-Նովային նվիրված շարքի յուրաքանչյուր նկար հետաքրքիր ձևով է պատկերված: Նկարները իրենց գույներով շրջանակ են ստեղծել: Եզրերը ավելի մուգ գույներով են ներկված և դեպի կենտրոն գնալիս ավելի բացանում են: Նրանց ընդհանուր մակերեսի վրա հետաքրքիր անկյունավոր, կոտրված գծեր են երևում, որոնցով նկարիչը կարծես ցանկացել է խուսափել ներկայից և ավելի հնաճ ու հնացած երևալ:

Նկարչի ազգականները վկայում են, որ Անդրե Սևրուզյանը իր կնոջ օգնությամբ է տիրապետել վերոհիշյալ տեխնիկային, որը բաթիկ ոճով բազմաթիվ աշխատանքներ ունի: Անդրեն յուրաքանչյուր նկարի մակերեսին գունային լաքաներ է առաջացրել և տվյալ գործվածքը եփել է հատուկ յուղերի մեջ: Եփելուց հետո լաքաներից գույներ են տարածվել և ստացվել են պատկերված գծերը: Ինչպես պատմում են արվեստագետի հարազատները՝ Սայաթ-Նովային նվիրված նկարաշարում պատկերված կանանց ֆիգուրների բնորոշիկն նրա կինը՝ Մանյան է եղել՝ իր դեմքին բնորոշ հատկանիշներով: Այս նկարաշարի յուրաքանչյուր պատ-

13 Կտորի վրա նկարագործված արվեստի տեսակ է:

կերում աչքի է ընկնում ոսկեգույնը, որը ոսկու փոշուց պատրաստված ներկ է:

1988 թվականին և այնուհետև 1996-1997 թթ. հանրահայտ նկարիչ Մարկո Գրիգորյանի նախաձեռնությամբ «Նյու Յորքի Գորկի ցուցասրահում» կազմակերպվել է Անդրե Սևրուգյանի պաստառների ցուցադրությունը<sup>14</sup>: 2002 թ. փետրվարի 9-23-ը Թեհրանի Մշակութային ժառանգության կազմակերպության<sup>15</sup> հովանավորությամբ և հեղինակի նախաձեռնությամբ Թեհրանի «Գոլեստան» պալատ-թանգարանում բացվեց Գերվիշի գեղանկարների ցուցադրությունը: Քառասուն տարի էր անցել Թեհրանում Անդրե Սևրուգյանի արվեստի վերջին ցուցադրությունից, բայց այս անգամ էլ արվեստագետի ստեղծագործությունները Իրանում արժանացան բարձր գնահատանքի: Իսկ բոլորովին վերջերս՝ 2008 թ. դեկտեմբերի 5-ից մինչև 2009 թ. հուլիսի 12-ը, Գերմանիայի Ֆրանկֆուրտ և Մայնց քաղաքներում, նույնպես մեր համագործակցությամբ, ներկայացվեցին հայր և որդի Սևրուգյանների ստեղծագործությունները:

Անդրե Սևրուգյանը նկարչական մեծ ժառանգություն է թողել՝ չհաշված այն ահռելի կորուստը, որ նա ունեցավ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: Նրա ստեղծագործությունները Արևելքի և Արևմուտքի արվեստի ինքնատիպ համաձուլվածք են: Արվեստագետի յուրահատուկ ոճի ազդեցությունը մեծ է ներկայումս ստեղծագործող նկարիչների վրա, որի վառ ապացույցներից մեկը իրանահայ մանրանկարիչ Աբրահամ Գուրգենյանի նկարչական աշխատանքներն են:

Պետք է ըստ արժանավույն գնահատել Գերվիշի ստեղծագործական վաստակը՝ իրանական մոդեռն արվեստում նրա ունեցած ծանրակշիռ ներդրման համար:

1996 թ. դեկտեմբերի 17-ին Գերմանիայի Շտուտգարտ քաղաքում իր մահկանացուն կնքեց իրանահայ անվանի նկարիչ Անդրե Սևրուգյանը՝ սերունդներին թողնելով բարձրարվեստ, արժեքավոր ստեղծագործություններ:

## Summary

### IRANIAN-ARMENIAN ARTIST, ANDRE SEVRUGIAN

Yvette N.Tajarian

André Sevrugian , known later as “Darvish,” was the son of photographer Antoine-Khan Sevruguine , born on May 1,1894 in Tehran. Vasil, Antoine’s father, studied Oriental languages at the Lazarev School in Moscow, after which he entered the civil service, working as a diplomat at the Russian Embassy in Tehran. Vasil, due to his political position, was obliged to change the surname “de Sevruguine.” Antoine adapted the name slightly, while his son André returned to the Armenian spelling. Antoine Sevrugian

14 Պաշտոնական անվանումը՝ «New York-Gorky Gallery»:

15 Իրանի Մշակութային ժառանգության կազմակերպությունը պետական հաստատություն է, որը գրանցում, վերահսկում, հովանավորում և պահպանում է առանձին արժեք ներկայացնող հուշարձանները: Թեհրանի «Գոլեստան» պալատը ընդգրկված է այդ ցանկում:

guine left the world of photography an exceptional oeuvre, consisting of photographs of the various regions of Iran and the court of Naser ad-Din Shah of the Qajar Dynasty.

André inherited his father's artistic predisposition, and was fascinated from a very early age by Persian poetry, which was later to be central to his artistic oeuvre. He was present when his father's friends visited his home, and would listen in fascination when his father recited verses from the Shahname. Often he would put on an old helmet, jump on a chair and pretend to be Rostam, Afrasyab, Qeqqaus or Bijan, the heroes of the epic. He belonged to the generation of artists of the first third of the 20th century who attempted to bring something new into the rich and renowned tradition of Persian art, which had stagnated since the 19th century.

He proceeded to illustrate his childhood dreams, inspired by evening recitations of the Persian national epic Shahname in his parents' house. In these pictures he was able to integrate the styles of the early and Safavid masters, such as Behzad and Reza Abbasi with their ornamentalized focus on detail, with modern elements, such as perspective, light and shadow, and spatiality. The result was again a series of illustrations of Omar Khayyam, Hafez and Baba Taher. Paintings on Armenian history and folk life, and particularly the songs of the Armenian bard Sayat-Nova, have a specific place in Darvish's oeuvre. André Sevrugian let himself be inspired by the centuries-old tradition of Persian book illustrations, and yet his paintings are a unique synthesis of Western and Eastern art.